

«ՍԱՍՆԱ ԺՈՒՐ» ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՊԻ ՃՅՈՒՂԵՐՆ ԸՍՏ ՊԱՏՈՒՄՆԵՐԻ

Վ. Շ. ՍԱՀԱԿՅԱՆ

«Սասնա ծռեր» ժողովրդական վեպը կազմված է չորս ճյուղից: Ծյուղ հասկացութիւնը վեպում նշանակում է սյուժետային ամբողջութիւն, մի սերնդի հետ կապված վիպական ավարտված պատմութիւն: Վեպը «ոչ թե կենտրոնանում է մի եղելութեան շուրջ, այլ բաժանված է երեք-չորս, երբեմն և ավելի սերունդների մեջ, որոնցից յուրաքանչյուրի վրա պատմվում են երկու-երեք վեպեր կամ տարբեր-տարբեր սյուժետներ: «Սասնա ծռերն», ուրեմն, կազմված է բազմաթիվ վեպերից, որ ասացողներն անվանում են «ճուղ»¹: Այս բազմաթիվ վեպերը և տարբեր սյուժեները «Սասնա ծռերի» մինչև այժմ գրառված պատումներում պատմվում են չորս ազգակից սերնդի շուրջ՝ 1. Սանասար և Բազդասար (երկվորյակ եղբայրներ), 2. Մեծ Մհեր (Սանասարի որդին), 3. Դավիթ (Մեծ Մհերի որդին), 4. Փոքր Մհեր (Դավթի որդին): Առկա պատումները մեկ այլ սերնդի կամ ճյուղի գոյութեան հիմք չեն տալիս:

Սակայն, որոշ ասացողների վկայութեամբ՝ ճյուղերի թիվը եղել է յոթ, նույնիսկ՝ քառասուն: «Ինչպես երևում է, այս նշանավոր վեպը մեծ ընդարձակութիւն ունի և չէ ամփոփվում երեք ծնունդի՝ Աբամելիքի, Դավթի և Մհերի պատմութեամբ, այլ Սասնու տերերի ցեղի պատմութիւնն է դա, Աբամելիքից և Սանասարից սկսած մինչև անժառանգ և անմահ Մհերը, որով վերջանում է վեպը: Դավիթը ոչ թե Աբամելիքի որդին է հանդիսանում, այլ՝ նրա սերունդ պայազատներից մեկը, և պատմողի ասելով, 39-րդ զարմը, որովհետև Արամելիքից մինչև Մհեր քառասուն զարմ են և ունին իրենց քառասուն ճյուղ և առանձին պատմութիւնը, որ քառասուն գիշեր կը նստեն և կը պատմեն»²:

Ոչ միայն փոտրել, գտնել, վերականգնել, այլև այժմյան տվյալներով անհնար է ենթադրել անգամ, թե ինչ են պատմել այդ քառասուն գիշերների ընթացքում, և ինչ են իրենցից ներկայացրել այդ քառասուն ճյուղերը:

Ասացողները և ունկնդիրները ի՞նչն են համարել քառասուն ճյուղ:

Ահա մի ուրիշ վկայութիւն. «Դազարն այս «նաղըլը» սովորել է յուր համագյուղացի Պողոս անունով մեկից: Դազարի ասելով՝ այդ Պողոսը գիտեր այս նաղըլի յոթ ճյուղն էլ, այն ևս՝ լավ»³: 6-րդ պատումի ասացող նույն Հովակիմենց Դազարը և 7-րդ պատումի ասացող Մոկացի Սախոն համագյուղացիներ են, Մոկաց Առինջ գյուղից: Ամենայն հավանականութեամբ, Դազարի վկայած Պողոսը Սախոյի պապ Պողոսն է, որը «Դավթի յոթ ճյուղն խիստ մեծ հաշու-ղութեամբ կասեր»⁴ և որից սովորել է նաև Սախոն: Մոկացի Սախոյի պատումի:

1 Մ. Արեղյան, Երկեր, հ. Ա, Ե., 1966, էջ 466:

2 «Սասնա ծռեր», հ. Ա, Երևան, 1936, էջ 3 (ընդգծումը մերն է՝ Վ. Ս.):

3 Նույն տեղում, էջ 249:

4 Նույն տեղում, էջ 305:

դրառող Սարգիս Հայկունին վկայում է, որ Սախոյի հորեղբայրը, ասինքն՝ Պողոսի որդին, նույնպես պատմում էր վեպը չորս ճյուղ և սովորել էր իր հորից։ Ուրեմն՝ երեք ասացող նշում են միևնույն աղբյուրը՝ Պողոսը, որից լսել և սովորել են վեպը։ Երկու ասացողներից գրառված պատմումներ կան՝ Հովակիմենց Ղազար և Մոկացի Սախո, մեկի՝ Սախոյի հորեղբորը, վեպն իմանալու մասին հիշատակություն կա միայն։ Այս երեք ասացողները Պողոսի պատմած «յոթ էյուղերից» քանի՞սն են սովորել և մտապահել, դժվար է ասել։ Հովակիմենց Ղազարից գրառված է (Մհեր)՝—Դավիթ—Մհեր ճյուղերը, Սախոյից՝ Սանասար և Բաղդասար էյուղը։ Պողոսի պատմածի մասին կարող ենք մոտավոր պատկերացում կազմել՝ միացնելով այս երկու, տարրեր ասացողներից դրառված պատմումները։ Սա միաժամանակ այն չորս ճյուղն է, որ պատմել է Սախոյի հորեղբայրը և որը բնորոշ է Մոկաց բոլոր ամբողջական պատմումներին։

Ի՞նչ բովանդակություն և տեսք են ունեցել Պողոսի պատմած մյուս երեք էյուղերը։ «Սախոն Դավթի ցեղեն և ճյուղերեն կը համարե «Բալաք աչառ», «Շիրին շահ ու Բարակ շահ», որ մենք այլ վեպերու շարքը դասած ենք»⁵։ 8-րդ պատումի ասացող Մոկացի Վարդանը, շնայած պատմում է (Մհեր)՝—Դավիթ—Մհեր ճյուղերը, բայց և «որպես Սանասար և Բաղդասար պատմող Սախոն՝ Դավթի պորտերեն կը համարեն. 1. Սանասար և Բաղդասար, 2. Դավիթ և Մելիք, 3. Մհեր, 4. Սաֆար փաշեն, 5. Սամ, 6. Բալաք աչառ, 7. Շիրին շահ և Բարակ շահ։ Վերոհիշյալները բացի «Սամեն» ամբողջն ևս գրի առած եմ»⁷։

Այս վերջին երեքը, եթե ոչ ամենուր, ապա գոնե Մոկսում, հավանաբար շատ տարածված և սիրված են եղել։ Հայտնի են դրանց բազմաթիվ դրառումներ, որպես առանձին վեպեր։ Դրանց մասին մի այլ առիթով հիշատակում է նաև 2-րդ պատումի ասացող Խաչոյենց Զատիկը։ Այս պատումի գրառող Բագրատ Խալաթյանցը ասում է. «Մհերի գետի վրա կամուրջ կապելը և ճանապարհորդներին արգելք լինելը (ինչպես պատմել է Նախոն) Զատիկի ասելով՝ ուրիշ «նաղըլի» է պատկանում, որը երեք ճյուղից է բաղկացած՝ ա. Բարակ Շախ, բ. Շիրին Շախ և գ. Դյուլուն Շախ (երեքն էլ մենք գրի առած ունենք)»⁸։

Հնարավոր է, որ Պողոսի պատմած յոթ ճյուղի մեջ մեղ հայտնի չորս ճյուղի՝ Սանասար և Բաղդասար—Մհեր—Դավիթ—Մհեր, հետ միասին մտել է նաև այս երեք ճյուղը՝ Բարակ շահ, Շիրին շահ և Դյուլուն շահ։ Հնարավոր է, որ հարակից կամ վիպական նման գրույցներն ու հեքիաթները մի տաղանդավոր ասացող-հանպատրաստից հնարողի մոտ միացվեն նշված չորս ճյուղերին, հարմարեցվեն սյուժետային հիմնական գծին և պատմվեն որպես մի ամբողջություն, մանավանդ որ վեպը հակված է ներառելու հարակից վիպական գրույցներ և ներկա իր չորս ճյուղով հենց այդ ճանապարհով է կազմվել։ «Այս մեծ վեպը կազմված է առանձին անկախ հատվածներից և պատմվել է, ինչպես նաև ուրիշ ժողովուրդների մեջ, առանձին հատվածներով, որոնք միմյան-

⁵ Փակագծերը պայմանական են և նշանակում են, որ տվյալ ճյուղը թերի է, պատմված է թուղիկ։

⁶ «Սասնա ծռեր», հ. Ա, էջ 305։

⁷ Նույն տեղում, էջ 329։

⁸ Բ. Խալաթյանց, «Սամա փահլիվաններ կամ Թլոր Դավիթ և Մհեր», Վաղարշապատ, 1899, էջ 51—52, տե՛ս ծանոթությունը։

ցից ավելի կամ պակաս գեղեցիկ են: Հատվածներով պատմելու հետևանքով և մեր ասացողները հաճախ ամբողջ վեպը չգիտեն, այլ՝ նրա այս կամ այն մասը միայն»⁹:

Պատումների մեծ մասն ունի ողորմիս նախերգանք, որի մեջ ողորմի է տրվում Սասնա տան բոլոր ներկայացուցիչներին՝ Սանասարից—Փոքր Մհեր (հաճախ նաև կանանց): Ողորմիսները ևս տարբեր ընդգրկում ունեն: Հիշվում են նաև քեռիներ և հորեղբայրներ, մայրական պապ, քահանա: Ողորմիս-նախերգանքները երգեր են, վեպի երգվող հատվածներից, որոնք որոշ պատումներում մեղեդին պահել են և երգվում են, մյուսներում էլ ասվում են առանց մեղեդու: Հայտնի է, որ երգվող հատվածները վեպի ամենահաստատուն և անփոփոխ մասերն են: Ծթե եղել են քառասուն զարմ իրենց քառասուն ճյուղ պատմությամբ, ապա ինչո՞ւ ողորմիսները շին պահել գոնե նրանց անվան հիշատակությունը: Կան պատումներ, որոնք ընդգրկում են միայն մեկ կամ երկու ճյուղ, բայց իրենց ողորմիսում պահում են բոլոր սերունդների անունների հիշատակությունը: Անունների հիշատակության հաջորդականությունը խիստ ավանդական է և նշանակում է սերունդների հաջորդականություն: Ողորմիսները տալիս են Սասնա տան տոհմաթառը, ծննդաբանությունը: Անունների ու նրանց հաջորդական կարգի ավանդականությունն ապացույց է չորս ճյուղի գոյություն և ո՛չ ավելի:

Սրվանձտյանի գրառած առաջին պատումը ողորմիս-նախերգանք չունի: Երբ Աբեղյանը գրի առավ երկրորդ պատումն իր ողորմիսով և որոշակի տարբերություններով, առաջ եկավ այդ երկու պատումները համագրելու պահանջը: Աբեղյանը նկատեց, որ նոր պատումը լրացնում էր Սրվանձտյանցի հրատարակածի թերի կողմերը... և փոխել տալիս վեպի ծավալի մասին մինչ այդ եղած հայացքը: Երևաց, որ վեպը, կազմված լինելով բազմաթիվ «ճյուղերից», ավելի ընդարձակ է, քան կարծում էին»¹⁰:

Բացի այն, որ երկրորդ պատումում կային հավելյալ հատվածներ և կերպարներ, ողորմիսում հիշատակվում էին երկու բոլորովին անծանոթ անուններ՝ Բաղդասար և Մելիքսեթ քահանա: Այդ անունների առկայությունը Աբամելիքից և Սանասարից հետո և Դավթից առաջ ենթադրել էր տալիս, որ նրանք կամ առանձին ճյուղեր պիտի ունենան (ինչպես Աբամելիք և Սանասարը, Դավթի) կամ կենտրոնական կերպարներ պիտի լինեն, ինչպես նույն ողորմիսում հիշատակվող Ձենով Հովանը և Յուան Վերգոն: Դրա համար էլ Աբեղյանն ափսոսում է, որ ասացող նախո Բեռին հրաժարվում է պատմել իր լավ չմացած հատվածները, «թեպետև շատ ցանկալի էր, որ գոնե մի-մի կտորներ ևս Բաղդասարի և Մելիքսեթ քահանայի ճյուղերից ունենային»¹¹:

Հետագա պատումները պարզեցին Բաղդասարի տեղը և դերը վեպում. նա առանձին ճյուղ չէր կազմում, երկվորյակ եղբայրներից մեկն էր և որոշ պատումներում անունն էր միայն փոխվում: Իրականում նա նախո Բեռու ողորմիսում հիշվող Սանասարն է.

⁹ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ա, էջ 467:

¹⁰ Նույն տեղում, էջ 525:

¹¹ «Սասնա ծռեր», հ. Ա, էջ 4 (ընդգծումը մերն է՝ Վ. Ս.):

«Դառնամ ղողղորմին տը տամ Աբասելիքին.

Դառնամ ղողղորմին տը տամ Սանասարին.

Դառնամ ղողղորմին տը տամ Բաղդասարին...»¹²,

Որքան էլ տարօրինակ է, Արամելիք, Սանասար, Բաղդասար երկու եղբայրների անուններն էին: Երկու եղբայր երեք անուն ունենալ չէին կարող: Որոշ պատումներում այդ անուններից երկուսն են պատահում՝ Աբամելիք¹³ և Սանասար է (Բաղդասար չկա), մյուսներում էլ՝ Սանասար և Բաղդասար է (Արամելիք չկա): Նախո Քեռու ողորմիսում այդ երեք անունները հետաքրքիր և եզակի համադրության են ենթարկվել, որի պատճառներն այլ են և ոչ Բաղդասարի առանձին էությունը: Միայն այժմ, երբ առկա պատումների թիվը բավական շատ է, կարելի է դրանց համեմատությամբ ժխտել Բաղդասարի, ինչպես նաև Մելիքսեթ քահանայի էությունը գոյությունը, այնինչ, երբ պատումները միայն երկուսն էին, Աբելյանի ենթադրությունը տեղին էր:

Ամենայն հավանականությամբ, Մելիքսեթը խաչապաշտ աղջկան կուպաշտ թաղավորի տուն ուղեկցող քահանան է: Դուցե նրա դերը վեպի սկզբնական տարբերակներում ավելի կարևոր է եղել, մանավանդ որ նա անմիջականորեն առնչվում է առաջին էություն հիմնական գաղափարներից մեկին՝ կրոնական հակամարտությանը և կուպաշտ միջավայրում հանդես գալիս որպես բրիստոնեության պահպանման և եղբայրներին բրիստոնյա կնքելու ու կրթելու դործը սատարող: Նրեի հետզհետե նվազել է այդ դերը և որոշ պատումներում էլ կերպարը բոլորովին դուրս է մղվել:

Աբելյանի գրառած պատումի տպագրությունից (1889 թ.) երեք տարի հետո (1892 թ.) հրատարակվում են Դարեգին Հովսեփյանի մի քանի տարբերակներ՝ գրառված Ապարանում և էջմիածնում: Աբելյանի առաջարկությամբ այդ տարբերակները կոչվեցին մի ընդհանուր անունով՝ «Սասմա ծռեր»¹⁴, Դիրքը խորագրված է. «Սասմա ծռեր» Սասունցի Դավիթ ժողովրդական վեպի երկու նոր վարիանտներ (Ապարանի և Մոկաց բարբառներով): Չնայած այդ գրքում զետեղված են չորս տարբեր պատումներ իրենց տողատակ տարբերակներով, սակայն Հովսեփյանը դրանք համախմբել է երկու նոր վարիանտի մեջ՝ «Մշո», և «Մոկաց»: «Այդ հայտնի վարիանտներին են պատկանում նաև մեր պրառած երկու նոր վարիանտները, Աբարանի բարբառովը՝ Մշո վարիանտին (Սրվանձտյանի), իսկ Մոկաց բարբառովը՝ Մոկաց վարիանտին (Աբելյանի)»¹⁵,

Սրվանձտյանի պատումն ընդգրկում է երեք էություն՝ Աբամելիք—Դավիթ—Մհեր, Աբելյանի պատումը՝ երկու էություն՝ Դավիթ—Մհեր և ողորմիսն իր երկու նոր անուններով: Կար նաև Աբելյանի կուսկածը եղածի պակասավորության և ենթադրությունը նոր էությունից գոյության վերաբերյալ: Եվ ահա, Հովսեփյանը գրի է առնում Մշո մի նոր տարբերակ (Ապարանի բնակիչները գաղթել են Մուշից և Բուլանըխից), որը մի էություն ավել է, քան Սրվանձտյանի պատումը. ունի չորս էություն՝ Ասլիմելիք—Մհեր—Դավիթ—Մհեր: «Մեր վարիանտներից մեկը

¹² Նույն տեղում, էջ 9:

¹³ Շփոթից խառափելու համար չենք թվարկում պատումներում հանդիպող Աբամելիք անվան բոլոր ձևերն ու փոփոխությունները:

¹⁴ Տե՛ս Մ. Աբելյան, Երկեր, հ. Ա, էջ 534:

¹⁵ «Սասնա ծռեր», հ. Ա, էջ 121:

գրած ենք Աբարանի Չամրու գյուղում, պատմել է մեզ նույն գյուղի ժամհար Մուրադը. այդ վարիանտի հետ համեմատել ենք երկու ուրիշ վարիանտ (Ա-ը՝ Ափնա և Բ-ը՝ Ղազանֆար գյուղում ենք գրել), նշանակելով միայն այն մասերը, որ Չամրուի վարիանտում չկան կամ տարբեր են պատմվածք¹⁶։ Նշված Ա և Բ տարբերակները տրված են միայն տողատակում։ Ինչպես երևում է այդ տողատակերից, Ա պատումը ևս ունեցել է շորս ճյուղ, որովհետև տարբերություններն նշումներն ուղեկցում են սկզբից մինչև վերջ, իսկ Բ պատումինը սկսվում են Մեծ Մհերից՝ կապված Դավթի և Մելիքի ծննդյան հետ։ Գուցե Բ պատումն էլ է ունեցել առաջին ճյուղը, բայց որովհետև առանձնապես մեծ տարբերություններ չեն նկատվել, Հովսեփյանը տողատակում նշումներ չի արել։ Գուցե և իսկապես Բ-ն առաջին ճյուղ չի ունեցել և սկսվել է հենց այնտեղից, որտեղից տողատակեր են նշվում, այսինքն՝ սկսվել է Մեծ Մհերի ճյուղով։ Համեմատյն դեպս, Ապարանի տարբերակն ունի ոչ թե մեկ, այլ՝ երեք պատում։

Ապարանցի Մուրադի պատումի տողատակերում, բացի Ա և Բ պատումներից (Ափնա և Ղազանֆար գյուղերում գրառված), կա նաև մի այսպիսի հիշատակություն. «Մի պանդուխտ Սպարկերտցու ասելով՝ Խանդուքի հայրենիքը «Բերդ Կապուտին» էր կոչվում»¹⁷։ Մի քանի տող հետո տողատակում նորից հիշվում է սպարկերտցու անունը. «Սպարկերտցին շար Աստղիկ էր անվանում»¹⁸։ Ուրեմն, մի այլ տարբերակ էլ Հովսեփյանին պատմել է մի սպարկերտցի։ «Գարեգին Հովսեփյանը գրի առած է եղել նաև ուրիշ պատումներ, որոնց ձևագիրները կորած են։ Դրանցից առաջին տպագրության մեջ (1892 թ.) բերված են որոշ հատվածներ կամ նրանց բովանդակությունը, որ և մենք դնում ենք համապատասխան տեղերում»¹⁹։ Առաջին հրատարակության ժամանակ, զանազան պատճառներով Հովսեփյանը հարկ չի համարել առանձին-առանձին գետնել այդ պատումները։ Հիմա դրանցից կան միայն որոշ հատվածներ՝ բառացի կամ վերապատմված ձևով։

Ապարանցի Մուրադի պատումը ծավալուն է. բազում նորությունների ու տարբերությունների հետ միասին այն մի ամբողջ ճյուղով (Առյուծաձև Մհերի ճյուղը) ավել է Սրվանձտյանի և Աբեղյանի գրառած պատումներից։ Վաղուց հատուկ հետաքրքրություն կար վեպի ամբողջական տեսքը վերականգնելու նկատմամբ²⁰, և Ապարանի պատումը գալիս էր օգնելու դրան։ Հովսեփյանն այս պատումի ընդհանուր վերնադիրը դրել է «Սասմա ծոեր», իսկ ճյուղերը վերնագրել՝ Ա. Սանասար և Ասլիմելիք, Բ. Առյուծաձև Մհեր, Գ. Դավիթ, Դ. Պատիկ Մհեր։

Ապարանցի Մուրադի պատումին հաջորդում է նորից «Սասմա ծոեր» ընդհանուր խորագիրը, ներքևում, փակագծերի մեջ. «Մոկաց բարբառով» և

16 «Սասմա ծոեր», Ա, էջ 121 (ընդգծումը մերն է՝ Վ. Ս.)։

17 Գ. Հովսեփյան, «Սասմա ծոեր», Թիֆլիս, 1892, էջ 40։

18 Նույն տեղում, էջ 56։

19 «Սասմա ծոեր», հ. Ա, էջ 122։

20 Գ. Սրվանձտյանն իր պատումի առաջարկում գրում է. «Այժմ իբրև բուն նյութ այս գրքույկիս պիտի կցորդեմ «Դավիթ Սասունցի կամ Մհերի դուռ» վեպը, որը երեք տարի հետամուտ եղա ձեռք բերելու և ոչ ոք գտա, որ ամբողջապես գիտեմարա։ Ի՞նչ են նշանակում «երեք տարի հետամուտ եղա» և «ամբողջապես գիտեմարա» արտայայտությունները։ Որտեղի՞ց է հայտնի եղել Սրվանձտյանին վեպը, որ նա հետամտել է գտնելու։ Գուցե առիթ է ունեցել լսել մի առանձին ճյուղ և ինչ-ինչ հիմքերից ենթադրել, որ վեպն երբևէ ավելի ընդարձակ է եղել։

հետո՝ նույն հաջորդականությամբ Հյուղերն իրենց համարակալումներով՝ Ա. Սանասարի և Բաղդասարի ծնունդը, Բ. Բաղդասար, Գ. Դավիթ, Դ. Մհեր՝ Տրպեսզի Մոկաց տարբերակը ևս ունենար ամբողջական տեսք, Հովսեփյանը միացրել է երեք տարբեր լատինագրերից («Մի Մոկացի», «Մի ուրիշ Մոկացի», Մոկացի Հովան») գրառած պատումները և համարել մի տարբերակ։ Երեք պատումներից յուրաքանչյուրն, այսպիսով, կորցրել է իր նախնական տեսքը, որովհետև այդպիսի սի յուրօրինակ «համահավաք» բնագիր կազմելով՝ Հովսեփյանը ձեռքի տակ եղած պատումներից վերցրել է այն, ինչ համարել է լավագույնը։

«Սանասարի և Բաղդասարի ծնունդը» հյուղի վերջում, տողատակում Հովսեփյանը դրում է. «Այս հյուղը պատմել է մեզ տասնյակ տարի մեր կողմերում ապրած մի Մոկացի»²¹։ «Բաղդասար» հյուղի վերջում՝ «Այս հյուղը պատմել է մի ուրիշ Մոկացի, որ շատ տարիներից ի վեր բնակվում էր Շիրակում։ ... Բացի սորանից այդ Մոկացին պատմել է և Դավիթ և Մհերի մասին, բայց մեծ նմանություն ունենալով հետևյալ հյուղի հետ (իմա՝ Մոկացի Հովանի պատումի՝ վ. Ս.), ավելորդ համադրեցինք այստեղ գետնդեղ»²²։ Հավանաբար, Հովսեփյանն առաջին հյուղը թողել է նույնությամբ, ինչպես գրառել է «Մի Մոկացուց», որովհետև ճիշտ այդպիսի ծավալով և առանձին հյուղ ունենք՝ դրառված Մոկսից (Մոկացի Սախո, պատում 7), Գավաշից (Զարգար Տեր-Սիսիթարյան, պատում 20) և Վանից (Դավիթ Գալստյան, պատում 44)։ Բայց երկրորդ հյուղը նա հանել է մի պատումից, որն ունեցել է առաջին՝ Սանասար և Բաղդասար, հյուղը և հաջորդող Դավիթ և Մհեր հյուղերը։ Այս տեսքով պատումներ (Դավիթի հյուղին անպայմանորեն նախորդել է (Մհեր) հյուղը) շատ են հանդիպում Մոկաց թևում։ Այն տեսքով, ինչ տեսքով այդ հյուղը մտել է Հովսեփյանի կազմած «Սասնա ծռերի» մեջ²³, ոչ մի տեղ չի հանդիպում։ Հենց այդ հյուղից առանձին վերցրած երևում է, որ այն արհեստականորեն կրճատված է սկզբից և վերջից։ Հաջորդող Դավիթ և Մհեր հյուղերի մասին ինքը՝ Հովսեփյանն է վկայում, որ կրճատել է՝ փոխարենը դնելով Մոկացի Հովանի ափելի հաջող պատումը։

Ընդհանրապես Հովսեփյանը մանրամասն տեղեկություններ չի հաղորդում ասացողների, գրառման ժամանակի, վայրի և պայմանների մասին, տեղեկություններ, որոնք այնքան կարևոր են զանազան հարցեր պարզաբանելու համար։ «Մի Մոկացի», «Մի ուրիշ Մոկացի», «Այս կտորը երգում էր Մոկացի Հովանը՝ վարիանտիս պատմողը»²⁴.— այսքսմը միայն ասացողների մասին։

Մոկացի Հովանի պատումը լավագույններից է, և այս տաղանդավոր ասացողի մասին ևս ոչ մի տեղեկություն չի տրվում։ Այդ պատումը ևս ուղեկցվում է Ա և Բ պատումներից տողատակերում բերվող հատվածներով։ Այդ Ա և Բ պատումների ասացողների մասին բացարձակապես ոչ մի հիշատակություն չկա, հայտնի չէ նույնիսկ, թե պատմողը որտեղացի է։ Ըստ երևույթին, Մոկսի պատումներ են, որովհետև նախ՝ Հովսեփյանը դրանց հատվածները դրել է

21 Գ. Հովսեփյան, «Սասնա ծռեր», էջ 67։

22 Գ. Հովսեփյան, «Սասնա ծռեր», էջ 67 (ընդգծումը մերն է՝ վ. Ս.)։

23 Այս պատումը «Սասնա ծռերի» 1936 թ. հրատարակության մեջ ունի «Բաղդասարի ամուսնությունը» վերնագիրը։

24 Գ. Հովսեփյան, «Սասնա ծռեր», էջ 79։

Մոկացի Հովանի²⁵ պատումի տողատակերին և երկրորդ՝ բառացի բերված հատվածները Մոկաց բարբառով են:

Ինչու՞ Գ. Հովսեփյանը «Սանասարի և Բաղդասարի ծնունդը» ճյուղից հետո դրել է «Բաղդասարը» որպես առանձին Բ ճյուղ:

Նախ՝ դա նախորդ երկու պատումի համեմատությամբ նոր բաներ շատ ունեն: Երկրորդ՝ ենթադրվում էր, որ Բաղդասարն առանձին ճյուղ պիտի ունենա: Հստ երևույթին, դրան համամիտ է եղել նաև Գ. Հովսեփյանը և ըստ այդմ էլ դասավորել է Մոկաց ճյուղերը, որոնք իրականում ոչ թե իրարից անկախ են, այլ մի ճյուղ, ըստ պատումների հիմնական տեսքի: Եվ երրորդ՝ եղած բոլոր պատումներում Սանասար և Բաղդասար ճյուղին հաջորդում է Մեծ Մհերի պատումներում Սանասար և Բաղդասար ճյուղին հաջորդում է կա՛մ բոլորովին բացակայում է Մհերի ճյուղը (հիշենք Նախո Քեռուց գրի առնվածը, որտեղ Մհեր անվան հիշատակությունն անգամ չկա), կա՛մ էլ լրիվ չէ և միացած է Դավթի ճյուղին (Մոկացի Հովանի), Բաղդասարն զբաղեցրել է առանձին ճյուղ: Սրան նպաստել է նաև մի այլ հանգամանք:

Պատումների հետ առաջին ծանոթությունից ստացվում է այն տպավորությունը, որ առհասարակ վեպում կերպարների, սրանց անունների և տեղերի շփոթ կա: Այդ թվացող շփոթն իր հիմքերն ունի, և, ի վերջո, վեպի բոլոր տարբերակների համադրությամբ ու համեմատությամբ վերստեղծված՝ պատումների ամբողջական պատկերը յուրաքանչյուր կերպար դնում է իր տեղում, իր որոշակի դերով: Ո՞րն է այդ ամբողջական պատկերը:

Աբամելիք—Ադնամելիք—Ասլիմելիք և Սանասար (Մուշ), Սանասար և Բաղդասար (Մոկա)՝ երկու կերպար է միայն՝ երկվորյակ եղբայրների կերպարները, որոնցից մեկն ավելի կատարյալ է թե՛ ֆիզիկական և թե՛ բնավորության ու մտավոր կարողություններով, մյուսը՝ պակասավոր կամ, ասացողները

²⁵ Հովսեփյանն իր գրառած «Ռոստամ Զալ» ժողովրդական վեպի վերջում (Թիֆլիս, 1905) տեղեկություններ է հաղորդում վեպին առացողի մասին. «Ռոստամ Զալը» գրի ենք առել 1890 թվին, Մայր Աթոռի ճեմարանում: Այդ տարին գիշերապահության պաշտոն էր կատարում Մոկաց Նորավանց գյուղացի Ուստենց Հովանը, ժողովրդական բանահյուսության մի կենդանի շտեմարան: Փշրանքների նյութի մի մասը՝ «Ասլան աղի» առաջին վարիանտը (եր. 3), «Մոկաց Միրզեն» (եր. 19), «Մեռավ էն, ինչ շատ մալ ունեք» (եր. 21), «Տնծացե՛ք, ուրախացե՛ք» (եր. 23) և ապա մնացած երգերն ու առակները մինչև 31 երես: Նորանից ենք գրի առել նաև Ռոստամ Զալը, Հովանը զարմանալի ընդունակություն ունեի պատմելու համար. հեռու ավելորդաբանությունից, համառոտ և կենդանի լեզվով: Նա կլինեի մոտավորապես հիսուն տարեկան. կադ էր. այդ պատճառով էլ շատերի կողմից «կադ Հովան» կոչված, բայց սրտոտ և կտրիճ: Կարգալ և գրել չգիտեր, բայց յուր պանդուխտ հայրենակիցների շրջանում համարվում էր որպես բանիմաց մարդ: Մի քանի տարուց ի վեր վախճանված է արդեն հայրենի գյուղում: Կարծում ենք, սա նույն Հովանն էլ Հովսեփյանը վերևում լրիվ չի թվարկում բանահյուսական այն ողջ նյութը, որ գրի է առել Հովանից, այդ թվում նաև «Դավթի» և Մհեր պատումը, որովհետև նշում է միայն նրանք, որոնք «Փշրանքներում» կան և կից ոչ մի տվյալ չունեն ասացողի մասին (նույն ժողովածուի մյուս նյութերը, որոնց տողատակերում նշված է պատմողը, չեն մտնում վերոհիշյալ թվարկման մեջ): «Փշրանքներում», «Ավանդություններ» բաժնի նյութերի առնչությամբ դրված է. «Առաջինը պատմել է Բաղդասարի» ճյուղը պատմող Մոկացին, իսկ երկրորդը՝ «Ս. Գևորգյան, Մոկացի Հովանը, Մոկաց վարիանտի պատմողը»: Նույն տեղում «Կարոս խաչ» վիպերգի ծանոթության մեջ ասվում է. «Այս երգը ասել է մեզ Սանասարի և Բաղդասարի ծնունդը» պատմող Մոկացին: Այստեղ ևս անունը չի նշվում: Ուրեմն, Հովսեփյանը երկար է աշխատել իր այդ մոկացի ասացողների հետ, ծանոթ եղել նրանց բանահյուսական ողջ պաշարին, գրառել նրանցից բաղում նյութեր: Հավանաբար, այդ բոլոր գրառումներն արվել են 1890 թ.՝ «Ռոստամ Զալի» հետ միասին:

յնորոշմամբ՝ մեկը լիքը բուռ ջուրն է, մյուսը՝ կիսատ: Այս երկու եղբայրների կերպարները կարևոր են իրենց միասնության մեջ, որ այլ բան չէ, քան երկու եղբայրների վիսպական մոտիվը: Բայց որովհետև վեպը կարողանում է այս միասնության պատկերի կողքին ստեղծել նաև առանձին, յուրօրինակ անհատականություններ, երբեմն այս անհատականությունների տեղերը փոխվում են՝ Սանասարն ստանձնում է Բաղդասարի դերը և հակառակը: Անունների տեղափոխություն է սա միայն և ո՛չ մի կապ չունի կերպարի էության հետ: Մշո պատումների Արամելիք—Աղյամելիք—Ասլիմելիքը Մոկաց պատումների Սանասարն է, այսինքն՝ եղբայրներից կատարյալը: Մշո պատումների Սանասարը Մոկաց պատումների Բաղդասարն է, այսինքն՝ պակասավորը, ծուռը: Այս բանը պարզ երևում է, եթե վերցնենք թեկուզ միայն Սրվանձտյանի, Աբեղյանի և Հովսեփյանի դրառած պատումները, որոնց մեջ առկա են վերը նշած անունների և դերերի բոլոր արտաքին փոփոխությունները:

1. Տարոնցի Կրպո.— Արամելիք և Սանասար

2. Ապարանցի Մուրադ.— Ասլիմելիք և Սանասար

3. Նախա Քեռի.— Արամելիք, Սանասար, Բաղդասար (ողորմիսում)

4. Մի Մոկացի.— Սանասար և Բաղդասար

5. Մի ուրիշ Մոկացի.— Սանասար և Բաղդասար (ողորմիսում)

6. Մի ուրիշ Մոկացի.— Բաղդասար և Սանասար (սյուժեում):

Պետք է նկատի ունենալ, որ անունների հաջորդականությունը հատկապես ողորմիսներում առանձին նշանակություն ունի, պատահական չէ, արտահայտում է սերնդաբանություն, իսկ եղբայրների դեպքում՝ կերպարի, այսպես կոչված, առաջնայնություն, ավագություն: Եթե հիշվում է Արամելիք, հետո Սանասար, ուրեմն Արամելիքն է լիքը բուռ ջուրը, Սանասարը՝ կիսատ: Եթե հիշվում է Սանասար, հետո Բաղդասար, Սանասարն է լիքը բուռ ջուրը:

Եթե պատումը ողորմիս չունի, որից երևար այդ հաջորդականությունը, պիտի կառչել սյուժեի ավանդական կարգից:

«Մեկի անուն դրից Սանասար,

Մեկին՝ Բաղդասար»:

Ողորմիսների հաջորդականության հավաստիությունը կարող է ապացուցվել նախ նրանով, որ դրանք, որպես վեպի երգվող հատվածներ, խիստ կայուն են և փոփոխությունների հանդեպ պահպանողական, ապա՝ հենց պատումներով, որոնց մեծագույն մասը հաստատում է ողորմիսի հաջորդականության ճշտությունն ու առանձնահատուկ նշանակությունը, այսինքն՝ Սանասարի անունը հիշվում է առաջ, ուրեմն Սանասարի դերն առաջնային է:

Բայց ահա մի պատում (Մի ուրիշ Մոկացի), որի ողորմիսում առկա է Սանասար և Բաղդասար հաջորդականությունը, բայց առաջնայնությունը Բաղդասարին է վերագրված. նա է ավագ ու կատարյալ եղբայրը, նրան է ուղղված Պղնձ քաղաքի աղջկա նամակը, նա է այդ նույն աղջկա կախարդանքը վերացնողը և նրա հետ ամուսնացողը, այսինքն այն, ինչ մյուս դեպքերում կապվում է Սանասարի անվան հետ: Անունների, հետևաբար և դերերի պատահական տեղափոխություն է սա, որ պարզ երևում է պատումների մեծագույն մասից, նույնիսկ հենց այս պատումից: Ողորմիսին հավատարու ավելի մեծ իրավունք ունենք՝ նախ, երկրորդ՝ Պղնձ քաղաքի աղջկա նամակ

բերողները չեն կարողանում ջոկել եղբայրներից Բաղդասարին և նամակը գրում են այն տղայի անկողնու վրա, որը մյուս տղայից «տասնապատիկ աղեկ ի», (աէս մարդ շատ աղէկ մարդ ի, քան էն մեկեկն), և այդ տղան դուրս է գալիս ո՛չ թե Բաղդասարը, որին ուղղված էր նամակը և որը, իրոք, պիտի ավելի աղեկ լիներ, քան Սանասարը, այլ՝ Սանասարը, որը, եթե փոքր եղբայրն է, պիտի որ «տասնապատիկ աղեկ» լիներ իր մեծ եղբորից (վնասում այսպես է, մեծ եղբայրն է կատարյալը, կտրիճը, զորեղը, իսկ հեքիաթներում ընդհակառակը՝ փոքրը)։ Մինչև այդ նամակի պատմությունը և՛ անվան, և՛ դերի առաջնայնությունը Սանասարինն է.

«Վարդապիտ Սանասար, Բաղդասար առից,
էկավ, մե սարի մեջ բնակվավ²⁶։

... Սանասար ասաց.

— Հայր սուրբ, մի տան անուն ի՞նչ տը դնինք²⁷։

Անունների շփոթությունը, երևի, առաջացել է այն բանից, որ Պղնձե քաղաքի աղջիկն իսկապես նամակը գրում է Բաղդասարի անունով, ո՛չ որպես իր փեսացուի, այլ՝ իր տագրոջ, որ գա, իրեն տանի Սանասարի համար։

«— Քամի, նա թուղթ կը տանըս,
կը տաս իմ տեգը Բաղդասարըն,
Գա, ձը տանը Սանասարըն²⁸։

Այսպես է Մոկացի Սախոյի պատումում։ Գուցե նման մի դրվագ հայտնի է եղել նաև Մի ուրիշ Մոկացուն, որ և շփոթության մեջ է գցել նրան։

Եվ ահա անունների պատահական տեղափոխությունն է Հովսեփյանին հիմք տվել առանձնացնելու եղբայրներից մեկի ամուսնության միջադեպերը որպես առանձին, Բաղդասարի ճյուղ, իսկ այնուհետև պատճառ դարձել, որ Հովսեփյանն ավելի հեռուն գնա։ Նա պատումի սկիզբն արհեստականորեն կրճատել է. ողորմիսին անսպասելիորեն հաջորդում է Սանասարի և Բաղդասարի բերդաշինության միջադեպը.

«Վարդապիտ Սանասար, Բաղդասար առից,
էկավ, մե սարի մեջ բնակվավ...»։

Մինչդեռ այս դրվագով սկսվող ո՛չ մի պատում չունենք։ Պետք է ենթադրել, որ հիշյալ միջադեպին նախորդել է այն մասը, որ դրված է Ա համարի տակ «Սանասարի և Բաղդասարի ծնունդը» վերնագրով և որը, սակայն, գրի է առնված ուրիշ ասացողից։ Իսկ վերջում պատումն ընդհատել է այնտեղ, որտեղից նախընտրել է դնել Մոկացի Հովանի պատումը։

Բանն այն է, որ «Մասնա ծոերի» Ա հատորում (1936 թ.) այդ «Բաղդասար» հատվածն հանդես է գալիս որպես մի առանձին պատում՝ Դ համարի

²⁶ «Մասնա ծոեր», հ. Ա, էջ 141.

²⁷ Նույն տեղում, էջ 142.

²⁸ Նույն տեղում, էջ 319.

տակ: Եվ ստացվում է այն տպավորությունը, որ վեպի այդ հատվածը նույնպես առանձին դրություն է ունեցել ու պատմվել ժողովրդի մեջ: Իրականում այդ հատվածը նման տեսքով անհավանական է, որ պատմվեր. տրամաբանական չէ, որ ասացողը մի ուրիշից լսեր միայն այդ հատվածը կամ իր լսած ամբողջական վեպից մտապահեր միայն այդքանը: Վեպի քառասունյոթ²⁹ պատումներից միայն հինգն ունեն Սասնասար և Բաղդասար ճյուղը, և այդ հինգից մեկը սա է: Եվ որովհետև այս վերջին պատումը Գ. Հովսեփյանի խմբագրական մասնատման հետևանք է, մնում է շորս պատում, որոնք և ապացուցում են, որ Բաղդասարը Սասնասարի հետ միասին միայն կարող էր հանգես դալ և իր առանձին ճյուղն ունենալ չէր կարող:

Որոշ պատումներում նշվում է, որ Բաղդասարը տարբեր պատճառներով թողնում-գնում է Իրան, և որ Ռուստամ Զալը Բաղդասարի սերնդից է: Այն, որ այս դեպքում ևս Բաղդասարը կապվում է մի այլ կերպարի և մի այլ վեպի հետ, նորից ապացույց է, որ դժվար է ենթադրել Բաղդասարի առանձին և ընդարձակ ճյուղ:

Մի հետաքրքիր հատված կա Մոկացի Հովանի պատումում:

Բաղդադ քաղաքի անունն ստուգաբանվում է Բաղդասար անունով: Փոքր Մհերն իր թափառումների ճանապարհին ուղում է անպայման մտնել Բաղդատ. «Իմ խորոխպոր գերեզման,— էսաց,— գեո Բաղդատա քաղաքն (ինչ Բաղդասար Պղնձե քաղքեն էկիր էր, կեացիր էր էնդիլ մեռիր էր. քաղաք շինիր էր, անուն դրիր էր Բաղդատ, զինք Բաղդասար էր)»³⁰, Հովսեփյանն ուշադրություն է հրավիրում այս հատվածի վրա. «Այս և հետևյալ հատվածները ցույց են տալիս, որ Բաղդասարի ճյուղը շատ ավելի ընդարձակ պիտի լինի և ոչամասկան ակնարկներով ավելի առատ»³¹: Հաջորդ երկու հատվածները հետևելաներն են. «Բաղդասար,— էսաց,— մի ազդեն ի, Սասման տնեն ի, էնու դերեզման րնձը շանք կտա»³²: «Բաղդասարը դերեզմանի վերա քառսուն խորան ժամ շինեցին, անուն դրին սըփ Սարգիս (մկա էլ անուն սըփ Սարգիս ր)»³³, Սրանք հետաքրքիր հատվածներ են, բայց ոչ այն բանի ապացույց, ինչի ձգտում է Գ. Հովսեփյանը: Առավել հավանական է, որ եղել է մի ստուգաբանական ավանդություն՝ կապված Բաղդասար անվան հետ, մանավանդ, որ վերոհիշյալ հատվածները հանդիպում են միայն այս մի պատումում և, միաժամանակ, կապվում նաև սուրբ Սարգսի անվան հետ:

«Ազգագրական հանդեսի» 20-րդ գրքում (1910 թ.) հրատարակված է վեպի պատումներից մեկը հետևյալ խորագրով. «Սասնա Տուն» յոթ ճյուղ (Վանա գավառաբարբառով), որը հետագայում արտատպված է «Սասնա ծոեր» ժողովածուի Բ հատորի Բ մասում «Սասնա տուն» (Վանա գավառաբարբառով) վերնագրով: Խմբագրությունն իրավացիորեն հանել է «յոթ ճյուղ» բառերը, որովհետև այդ պատումի ենթագրյալ յոթ ճյուղերը բոլորովին էլ նոր ճյուղեր չեն, ոչինչ չեն ավելացնում վեպին, իսկ հավելյալ հատվածներն ու անունները ոչ մի կապ չունեն վեպի հետ:

²⁹ Նկատի են առնվում միայն «Սասնա ծոեր» երկհատոր ժողովածուի մեջ տեղ գտած պատումները:

³⁰ «Սասնա ծոեր», 1892, էջ 143:

³¹ Նույն տեղում, էջ 143, տե՛ս ծանոթությունը:

³² Նույն տեղում, էջ 144:

³³ Նույն տեղում, էջ 146:

Պատումն սկսվում է Սանասար և Բաղդասար ճյուղով և ավարտվում փոքր Մհերի Ագռավու քարում փակվելով: Սյուժեում ավելացված է մի նոր կերպար՝ Ջոշ Մելքոն, որը ոչ մի նոր բան չունի իր մեջ: Նրա հետ կապված սյուժեն կազմված է Դավթի ճյուղի բազմիցս կրկնվող միջադեպերից: Պատմության ընթացքն արհեստականորեն ձգձգված է, միևնույն միջադեպերն ու դրվագները վերագրվում են տարբեր կերպարների: Նույնիսկ հավելումներով, այս պատումը յոթ ճյուղ չի կազմում: Պատումում սերունդների ճյուղագրությունն այսպիսին է. Սանասար և Բաղդասար—Ջոշ Մելքոն—Ջոշ Մհեր—Դավթ—Մհեր: Այստեղից-այնտեղից հավաքված Ջոշ Մելքոնի կերպարը ոչնչով չի տարբերվում Սանասարի և Ջոշ Մհերի կերպարներից: Այնինչ այդ կրկնությունների մեջ կորել են շատ ավանդական հատվածներ բուն Սանասարի ճյուղից: Զանփուղդ դեռ, մյուս դեռերի կերպարները շինծու են և ավելորդ: Դրանք փոխ են առնված այլ հեքիաթներից և ո՛չ ամբողջությամբ, դրա համար էլ կորցրել են իրենց համն ու հոտը: Սա ցույց է տալիս, թե ինչպես, երբ հեքիաթային հատվածներն ու մոտիվները մեքենայորեն մտցվում են վեպի մեջ, գունազրկվում է հեքիաթը և ոչինչ չի շահում վեպը՝ բացի ճապաղվելուց:

Եթե գրառված չլիներ այս պատումը և պահպանված լիներ սոսկ հիշատակություն, թե եղել է Վանա գավառաբարբառով յոթ ճյուղից բաղկացած մի պատում, պիտի փնտրեինք այդ ենթադրյալ երեք ճյուղերը: Այս պատումն ևս ցույց է տալիս, որ նմանօրինակ փնտրտուքներն անօգուտ են և ինքնանպատակ:

Յոթ կամ ավելի ճյուղերի փնտրտուքներն ու դրանց գտնելու նպատակադրումը հասցնում է վեպը այն տեսքին, ինչ այն ունի Տիգրան Զիթունու կազմած ու խմբագրած «Սասունականի» մեջ³⁴:

Բանահավաք Տիգրան Զիթունին 1907 թ., Վանում մեծ խանդավառությամբ հետամուտ է լինում վեպի նոր տարբերակների հայտնաբերմանը և քոդերի վայրագություններից հալածված ու Վանում ապաստանած Կարկառի, Սպարկերտի գաղթականներից գրի է առնում վեպի երկու նոր տարբերակ, որոնք այնուհետև ներկայացնում է յոթ ճյուղ տեսքով: Պատումների գրառումը կատարված է հարազատությամբ, բարբառային տառադարձության ու նրբությունների պահպանմամբ: Ասացողները՝ Կարկառի Բերկրի գյուղից խուզոն և Կծկուկ-Ակոբը և Սպարկերտի ճաժվան գյուղից Կանչոն քաջ վիպասացներ են ու երգիչներ: Նրանցից գրառածները ավանդական լավագույն պատումներից ըստ էության ոչ մի շեղում ու տարբերություն չունեն, ավելին՝ ապացույց են այդ ավանդականության: Յոթ ճյուղ ստանալու համար Զիթունին հարկադրված է եղել կա՛մ երկատել միևնույն կերպարը (այդպիսի դեպքերում մշտապես տուժում են Մեծ Մհերի, մասամբ էլ, Դավթի կեպարները), կա՛մ էլ վեպի վերջում, Փոքր Մհերից հետո շարունակել Սասնա տան՝ ենթադրյալ սերունդների պատմությունը, օգտվելով զանազան հեքիաթային կերպարներից ու մոտիվներից, որոնք իրականում ոչ մի կապ չունեն վեպի հետ, նույնիսկ, եթե ասացողը վկայում է, որ այդ կերպարները Սասնա տանից են:

«Սասունականի» մեջ Զիթունին յոթ ճյուղի փոխարեն յոթն անգամ ավելացրել է այն շփոթը, որ երևան է գալիս բոլոր պատումների համեմատական քննության ու համադրման ժամանակ: 1941 թ. նա արդեն ձեռքի տակ ունի

³⁴ Զիթունի, Սասունական, Փարիզ, 1942:

բավական թվով հրատարակված պատումներու Յանկանալով կազմել համահավար մի տեքստ և, ավելին, ենթարկելով այն գրական «վերամշակման», անխտիր «գտագործել է բոլոր պատումների բոլոր միջադեպերն ու փոքրադույն հատվածները: Փոխանակ համագրելու, գիտական քննության միջոցով ղատելու ու ղտելու համեմատաբար նախնական, ավանդական միջադեպերը, նա կողք-կողքի շարել է բոլոր հատվածները: Պարզ է, թե այս դեպքում ինչ-րան կրկնություններ, հակասություններ, տարբերություններ, աղավաղումներ ու շփոթ կարող էր առաջանալ: Առանձնացվել, երկփեղկվել են տարբեր անուններով հանդես եկող միևնույն կերպարները՝ մի Մհերը, մի Դավիթը դարձել են բազում Մհերներ ու Դավիթներ: Այդպես վարվելու դեպքում, եթե Զիթունին իր ձևերի տակ ունենար ոչ թե 35 պատում, այլ՝ հիշյալ 47-ը, «Սասունականի» ծավալը պիտի որ կրկնապատկվեր:

«Սասունականն» ևս իր գոյությունմբ մի նոր ապացույց է վեպի յոթ ճյուղի շրջություն:

Սյսսիստով, ձևերի տակ եղած պատումներից ոչ մեկը՝ ներառյալ Զիթունու 1907 թ. գրառած երեք պատումները, բացի հայտնի չորս ճյուղերից, մի այլ, առանձին ճյուղի հիշատակությունը կամ հիշողությունն անգամ պահած չունի: Ընդհակառակը, դրանք հնարավորություն են տալիս հավաստելու, որ վեպն ունեցել է և ունի չորս ճյուղ միայն, որ յոթ և քառասուն ճյուղի վկայությունները վիպական չափադանցություն են: Ասացողների վկայությունների մեջ, անշուշտ, մեծ դեր են խաղացել տարբեր ժողովուրդների կողմից այնքան սիրված ու ընդունված երեք, յոթ, քառասուն թվերը:

ВЕТВИ НАРОДНОГО ЭПОСА САСНА ЦЫРЕР» ПО ВАРИАНТАМ

В. Ш. СААКЯН

Р е з ю м е

Варианты народного эпоса «Сасна Цырер» отличаются различным охватом ветвей. Большинство вариантов представляет единое целое из четырех ветвей. Существуют варианты из одной, двух, трех ветвей.

Как на основе самих вариантов, так и с помощью других внешних фактов, отрицается версия существования 7 или 40 ветвей и подтверждается наличие только четырех. Доказывается, что сведения сказителей об имевшихся семи и более ветвях не имеют фактического обоснования. И попытки собирателей по восстановлению якобы существующих 5, 6, 7-ой ветвей лишены научной основы.